ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5720-Ա «24» նոյեմբերի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.78 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԱՅԱՆԵ ԱՐՇԱՎԻՐԻ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով «Երևանի Հ. Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղի հարցազրույցի 2026 թվականի նոյեմբերի 11-ի արձանագրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2026 թվականի նոյեմբերի 17-ի հ. Ն/78172-26 գրությունը՝

1. Գայանե Արշավիրի Վարժապետյանին 2026 թվականի նոյեմբերի 25-ից նշանակել «Երևանի Հ. Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2026 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2031 թվականի նոյեմբերի 25-ը ներառյալ:

2. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ